Գյուղատնտեսության զարգացումը Լոռու մարզի Հարթագյուղ համայնքում

Նկարում Լոռու մարզի Հարթագյուղ համայնքն է

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԸ

«ԱՍՏՂԻԿ» ԲՀ- բարեգործական հիմնադրամի տնօրեն – **Մարիամ Անտոնյան**

Հիմնադրամը 2018 թվականից սկսած զարգացման ծրագիր է իրականացնում Լոռու մարզի Հարթագյուղ համայնքում:

Ծրագիրը բարեգործական է, ունի բիզնես բաղադրիչ

Ծրագրի նպատակն է - ապահովել համայնքի զարգացումը՝ հաշվի առնելով համայնքի ուժեղ եւ թույլ կողմերը:

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՐԹԱԳՅՈՒՂՈՒՄ

- Համայնքի գյուղնշանակության հողեր - շուրջ 500 հա, որից 2017 թվականի դրությամբ մշակվել է միայն 130 հա (26 %)
- Աղքատության մակարդակը - մոտ 90 %
- Գործազրկության բարձր մակարդակ
- Տարածքը հարթավայրային, հարուստ՝ միկրոտարրերով հարուստ հողերով

- Հոլանդիայում հողի լաբորատոր հետազոտությունից հետո պարզվեց, որ համայնքային հողերը շատ նպաստավոր են ոչ միայն ավանդական, այլև օրգանական գյուղատնտեսության զարգացման համար:

Մեր նշանաբանն է՝ հողը հարստություն է, որը կարող է գյուղացուն մեծ եկամուտ ապահովել

- Հայաստանի համայնքներն ունեն գյուղատնտեսության զարգացման համար մեծ ներուժ, որը կամ չի օգտագործվում կամ օգտագործվում է թերի:

- Համայնքներում հողը մշակում են դեռևս խորհրդային ժամանակաշրջանի մեթոդներով, կուլտուրաներով, հաճախ նույնիսկ՝ տեխնիկայով:

- Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսությունը ճիշտ և գրագետ զարգացնելու արդյունքում կարող ենք բազմաթիվ համայնքների զարգացում ապահովել

- Անհրաժեշտ է գյուղացուն տալ նոր գիտելիքներ և նոր գիտելիքները կիրառելու մեթոդներ

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Որակյալ հողին՝ որակյալ սերմ, ձեռք բերվեց Հոլանդիայից՝ եվրոպական օրգանական սերտիֆիկատով
- Տարեկան 2 - 3 անգամ բերքահավաք, գյուղացու եկամուտների աճ
- Գոմաղբի օգտագործում ոչ թե որպես վառելիք, այլ հողի պարարտացում՝ բացարձակապես ավանդական մեթոդներով
- Միջհամայնքային հարաբերությունների ակտիվացում

(որպես վառելիք Մեծ Պարնիում արտադրված բրիկետի օգտագործում)

- Մշակվող հողատարածքների ավելացում

  2-րդ տարում՝ 25հա –ով

  5-րդ տարում՝ հասցնել 100հա

Չինական կաղամբ

Տարեկան 2 անգամ կարելի է բերք հավաքել,
շուկայում մեծ պահանջարկ կա

Կաղամբազգի՝ կալե

տարածաշրջանի համար բավականին հարմար, ցրտադիմացկուն է, ավելին՝ կարելի է թողնել մինչև խոր ձմեռ և ձմռանն էլ բերքահավաք կազմակերպել

ՅՈՒԿԻՆԻ

2 ամիս շարունակ բերք է տալիս,
1 թուփից օրական ստացվում է մինչև 5 կգ բերք
Շատ դիմացկուն է, կարելի է երկար պահել մառանում,
հարուստ է վիտամիններով



ԼՈԲՈՒ 6 ՏԵՍԱԿ

Մշակվել է շուկայում մրցունակ, հեշտ մշակվող և ավանդական սորտերից 3 անգամ ավելի բերք տվող տեսակներ



ԲՈՂԿ ԵՎ ՈԼՈՌ

Ավանդական բանջարեղեններ,
բայց մշակությամբ և բերքատվությամբ անծանոթ



Ավանդական դդում՝ ոչ ավանդական սորտի

Մեծ պահանջարկ ունեն իրենց չափսի և համի շնորհիվ
Մարքեթինգի տեսակետից արագ եկամտի աղբյուր է:
Հեշտ մշակություն ունի և բացարձակ պահանջկոտ բույս չէ



Չենք մոռացել ավանդական հատիկեղենը, բայց՝ մաքեթինգային նոր մոտեցումներով

Մշակվել է վարսակ , կտավատ և հնդկաձավար:

1-ին նպատակը - հողի բնական հարստացումն էր,

2-րդ նպատակը - ավանդական մշակաբույսերի ոչ ավանդական օգտագործման փորձի փոխանակումը:

3-րդ նպատակը-անթափոն տնտեսության ձևավորում

Ինչ է անթափոն տնտեսությունը

- Հնդկաձավարի վերամշակման ընթացքում վնասված հատիկներից ստացվել է ալյուր, հացաթխման համար
- վերամշակման արդյունքում թեփուկներից՝ բարձեր,
- մնացորդը շատ լավ անասնակեր է համարվում
- Վարսակի փաթիլներից ալյուրի ստացում հացաթխման համար - այլընտրանք է ցորենի ալյուրին:

Սա այն նույն տարածքն է, ինչը պատկերված էր առաջին նկարում, Լոռու մարզ գյուղ Հարթագյուղ հնդկաձավարի դաշտ



Ինչպես մոտիվացնել համայնքի բնակիչներին

- **1-ին քայլ** - ծրագիրը բարեգործական է, մշակած բանջարեղենից բաժանվում էր համայնքի անապահով ընտանիքներին

Նպատակը կայանում է նրանում, որ գյուղացին զգա իր աշխատանքի արդյունքը, ինչպես նաև հարմարվի նոր մշակաբույսերին եւ նրա մշակմանը:

- **2-րդ քայլը** – գտնել վաճառքի ուղիներ, ուղիղ կապ ստեղծել համայնքի և գնորդի միջև

- եկամուտ – կարևոր է, որ գյուղացին իր աշխատանքի դիմաց վարձատրություն ստանա, իսկ դա այս պարագայում վաճառքից ստացված եկամուտն է

- Գնորդ- Հայաստանում գնորդը պատրաստ է ավելին վճարել լավորակ բանջարեղենի համար, նա փնտրում է բանջարեղենի լավ արտադրողի

Ստացված եկամուտների ճիշտ օգտագործում՝ ետ վերադարձ դեպի համայնք

Հարթագյուղ համայնքը ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք տարիների ընթացքում այնքան են շատացել, որ միակողմանի հնարավոր չէ իրականացնել:

1. ոռոգման համակարգի բացակայություն

2. համայնքի ներսում գյուղտեխնիկայի իսպառ բացակայություն

Բնականաբար էլ ինչ գյուղատնտեսություն առանց այս երկուսի: Մեր ծրագիրը տալիս է համայնքին հնարավորություն այս խնդիրները լուծելու: Բերքի վաճառքից ստացված եկամուտը ետ է վերադարձվում համայնք և ամեն տարի այն ավելանալու է

Համայնքի զարգացման լրացուցիչ հնարավորություն Տուրիզմ

- Համայնքը մեծ ներուժ ունի տուրիզմի զարգացման համար/Սուրբ Հովհաննես մատուռը որպես ուխտատեղի/
- Համայնքի մեծ ներուժ ունի ձմեռային տուրիզմի զարգացման համար՝ ձյունառատ ձմեռ և ոչ բարձր լեռներ
- Գյուղատնտեսության զարգացումը մեծ ներուժ է ապահովում գյուղական տուրիզմի զարգացման համար
- Արդյունքում՝ համայնքի տնտեսության զարգացում

Երիտասարդների ներգրավվածություն

- Ակտիվ համագործակցություն Ագրարային Համալսարանի և նրա Վանաձորի մասնաճյուղի հետ՝ որպես կրթության հետ զուգահեռ պրակտիկա
- Նույն համալսարանների ուսանողների հետ Հարթագյուղում պրակտիկ դասերի կազմակերպում
- ***Նպատակը*** *-այս ոլորտում սովորող ուսանողները պրակտիկ դասերի և գյուղի հետ շփման պակաս ունեն, որը փորձում ենք լրացնել:*
- *Շատերը չեն պատկերացնում, որ կարող են գյուղատնտեսությունից եկամուտ ստանալ*

Հարթագյուղ համայնքից տվյալ համալսարանում սովորող երիտասարդներից մեկն արդեն որոշում է կայացրել ետ վերադառնալ իր հայրենի գյուղ և զարգացնել իր տնտեսությունը

Սա շղթա է, որի միասնականության ապահովումը կբերի երկրի ներսում շատ խնդիրների լուծման:

Մեր քայլն արված է Հարթագյուղ համայնքում և պատրաստ ենք այն կիսել Լոռու մարզի այլ համայնքերում

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ